Հավելված N 2
ՀՀ կառավարության 2026 թվականի
նոյեմբերի 5-ի N 1611-Լ որոշման

Կ Ա Ր Գ

ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և բարեկեցության նախարարության միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) կողմից իրականացվող՝ բազմազավակ ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակում հավաստագրերի տրամադրման, փոփոխման, չեղարկման, հիփոթեքային վարկերի ամենամսյա վճարների (մայր գումարի և տոկոսագումարի) մարմանն ուղղված աջակցության գումարների տրամադրման և օգտագործման հետ կապված գործընթացները:

2. Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

1) **ծրագիր**՝ բազմազավակ ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիր.

2) **դիմող**՝ ծրագրի շահառուի կարգավիճակ ստանալու նպատակով առցանց դիմում ներկայացրած անձ, ով հանդիսանում է 6 և ավելի անչափահաս երեխա ունեցող ծնողներից մեկը.

3) **շահառու**՝ սույն որոշման N 1 հավելվածի 6-րդ կետով սահմանված անձ.

4) **հիփոթեքային վարկ**՝ Հայաստանի Հանրապետությունում բնակարան կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունք կամ անհատական բնակելի տուն ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ծրագրի շրջանակում տրամադրվող հիփոթեքային վարկ.

5) **կազմակերպություն**՝ առևտրային բանկեր, վարկային կազմակերպություններ, որոնք ծրագրի շրջանակում համագործակցում են ծառայության հետ.

6) **վարկային պայմանագիր**՝ ծրագրի ներքո հիփոթեքային վարկի վերաբերյալ կազմակերպության և շահառուի միջև կնքված պայմանագիր.

7) **աջակցության գումար**՝ հիփոթեքային վարկի ամենամսյա վճարների (մայր գումարի և տոկոսագումարի) մարմանն ուղղված գումար, որը սուբսիդավորում է ծառայության կողմից սույն որոշման N 1 հավելվածի 11-րդ կետով սահմանված սահմանաչափով.

8) **հավաստագիր**՝ սույն որոշման N 1 հավելվածի 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված, ինքնաշխատ եղանակով տրամադրվող և ծրագրի շահառու հանդիսանալու մասին փաստը հավաստող փաստաթուղթ.

9) **հաշիվ**՝ կազմակերպության բանկային հաշիվ, որին ծրագրի շրջանակում ծառայությունը փոխանցում է աջակցության գումարը:

2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3. Ծրագիրն իրականացվում է հետևյալ ընթացակարգով՝

1) դիմողը մինչև 2029 թվականի դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային տարբերակով դիմում է ծառայություն՝ կատարելով հետևյալ քայլերը.

ա. «Ես եմ» ազգային նույնականացման հարթակի միջոցով անցնում է համապատասխան նույնականացումը՝ օգտագործելով բջջային նույնականացման քարտ (mID) կամ նույնականացման ID քարտ: Ընդ որում, գրանցված ամուսնության առկայության դեպքում նույն գործողությունը վերաբերում է դիմողի ամուսնուն, ինչը հնարավորություն է տալիս նրանց խիստ նույնականացման միջոցով պետական տեղեկատվական համակարգերի փոխգործելիությամբ ստանալ ծրագրի ներքո պահանջվող տեղեկատվությունը,

բ. հաստատում կամ բողոքարկում է պետական տեղեկատվական համակարգերի փոխգործելիությամբ ստացված տվյալների հավաստիությունը,

գ. մուտքագրում է հետադարձ կապի էլեկտրոնային փոստի հասցեն և բջջային հեռախոսահամարը, ինչպես նաև նշում է սույն որոշման N 1 հավելվածի 5-րդ կետով նախատեսված աջակցության նախընտրելի եղանակը (բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերում, անհատական բնակելի տան կառուցում).

2) ստացված դիմումի մշակման արդյունքում որոշման պահանջներին բավարարող դիմողն ինքնաշխատ եղանակով ստանում է շահառուի կարգավիճակ, հիմք ընդունելով՝

ա. բնակչության պետական ռեգիստրից ինքնաշխատ եղանակով ստացված տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունենալու վերաբերյալ,

բ. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունից կամ տվյալ պահի դրությամբ այդ տեղեկատվության ստացման համար առաջնային աղբյուր հանդիսացող և ծրագրի թվային հարթակի հետ փոխգործելիությունն ապահովված տեղեկատվական համակարգից ինքնաշխատ եղանակով ստացված տեղեկատվությունը երեխա-ծնող կապի, շահառուների ողջ լինելու ու գրանցված ամուսնության առկայության/բացակայության վերաբերյալ,

գ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 842-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ և առանձին բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2027 թվականների ծրագրի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի, ինչպես նաև 2024 թվականի մայիսի 16-ի N 710-Լ որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի շահառուների տվյալները՝ սույն որոշման N 1 հավելվածի 9-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված պայմանի ստուգման համար,

դ. Պետական եկամուտների կոմիտեից ինքնաշխատ եղանակով ստացված տեղեկատվությունը շահառուի, գրանցված ամուսնության առկայության դեպքում նաև նրա ամուսնու՝ ծրագրին դիմելու օրվա դրությամբ նախորդ տարվա ընթացքում ստացված եկամուտների վերաբերյալ հայտարարագրի առկայության, ինչպես նաև դրանում ներկայացված եկամուտների հանրագումարի վերաբերյալ՝ սույն

որոշման N 1 հավելվածի 9-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պայմանի ստուգման համար,

ե. Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեից ինքնաշխատ եղանակով ստացված տեղեկատվությունը սույն որոշման N 1 հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված պայմանի ստուգման համար.

3) ծրագրի շահառու հանդիսանալու դեպքում ինքնաշխատ եղանակով ձևավորվում է հավաստագիրը, որը տրամադրվում է էլեկտրոնային եղանակով՝ ուղարկելով դիմողի կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին.

4) ծրագրի շահառու չհանդիսանալու դեպքում ինքնաշխատ եղանակով հաղորդագրություն է ուղարկվում դիմողի կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին՝ նշելով սույն կետի 5-րդ ենթակետով նախատեսված մերժման հիմքերը.

5) դիմումը մերժվում է, եթե՝

ա. դիմողը կամ ընտանիքի որևէ անդամը բնակչության պետական ռեգիստրից ինքնաշխատ եղանակով ստացված տեղեկատվության համաձայն՝ չունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն,

բ. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունից կամ տվյալ պահի դրությամբ այդ տեղեկատվության ստացման համար առաջնային աղբյուր հանդիսացող և ծրագրի թվային հարթակի հետ փոխգործելիությունն ապահովված տեղեկատվական համակարգից ինքնաշխատ եղանակով ստացված տեղեկատվության համաձայն՝ առկա է երեխա-ծնող կապի, շահառուների ողջ լինելու ու գրանցված ամուսնության վերաբերյալ անհամապատասխանություն,

գ. դիմողը կամ ընտանիքի որևէ անդամը Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 169-Լ որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի շահառու է և 2024 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ստացել է հավաստագիր,

դ. դիմողը կամ ընտանիքի որևէ անդամը Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 842-Լ որոշմամբ հաստատված՝

Հայաստանի Հանրապետության սահմանամերձ և առանձին բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2027 թվականների ծրագրի շահառու է,

ե. դիմողը կամ ընտանիքի որևէ անդամը Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի N 710-Լ որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի շահառու է,

զ. շահառուն, գրանցված ամուսնության առկայության դեպքում նաև նրա ամուսինը՝ ծրագրին դիմելու օրվա դրությամբ չի ներկայացրել նախորդ տարվա ընթացքում ստացված եկամուտների վերաբերյալ հայտարարագիրը, կամ ներկայացված հայտարարագրում եկամուտների հանրագումարը գերազանցում է 10 մլն դրամը,

է. շահառուն, գրանցված ամուսնության առկայության դեպքում նաև նրա ամուսինը՝ ծրագրին դիմելու օրվա դրությամբ նախորդ 2 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ունեցել է սեփականության կամ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով (50 տոկոս և ավելի մասնաբաժնով) պատկանող բնակության համար նախատեսված բնակելի անշարժ գույք կամ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքով սահմանված կարգով գրանցված գնման իրավունք, որի կադաստրային արժեքը գերազանցում է 50 մլն դրամը.

6) դիմումը մերժվելու դեպքում հնարավոր է ներկայացնել նոր դիմում, եթե նախորդ հաշվետու տարվա ընթացքում ստացված եկամուտների վերաբերյալ ներկայացված ճշտված հաշվարկներում եկամուտների հանրագումարը չի գերազանցում 10 մլն դրամը.

7) հավաստագիրն ստանալուց հետո շահառուն դիմում է կազմակերպություն հիփոթեքային վարկավորման գործընթացն սկսելու համար.

8) շահառուի հետ վարկային պայմանագիր կնքելուց և հիփոթեքային վարկը փաստացի հատկացնելուց հետո, կազմակերպությունը ծառայությանն է տրամադրում հիփոթեքային վարկի գծով վճարման ժամանակացույցը և վճարումն իրականացնելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ.

9) սույն որոշման N 1 հավելվածի 11-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դեպքերում շահառուի հետ անհատական բնակելի տան կառուցման համար նախատեսված հողամասի ձեռքբերման նպատակով վարկի տրամադրման վարկային պայմանագիր կնքելուց և վարկը փաստացի հատկացնելուց հետո կազմակերպությունը ծառայությանն է տրամադրում վարկի գծով վճարման ժամանակացույցը և վճարումն իրականացնելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ.

10) սույն որոշման N 1 հավելվածի 11-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դեպքերում շահառուի հետ գյուղատնտեսական նշանակության հողամասի ձեռքբերման նպատակով վարկի տրամադրման վարկային պայմանագիր կնքելուց և վարկը փաստացի հատկացնելուց հետո կազմակերպությունը ծառայությանն է տրամադրում վարկի գծով վճարման ժամանակացույցը և վճարումն իրականացնելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ.

11) ծառայությունն ամսական պարբերականությամբ կազմակերպության հաշվին է փոխանցում աջակցության գումարները՝ ըստ սույն կետի 7-9-րդ ենթակետերում, ինչպես նաև սույն կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ժամանակացույցի: Ժամանակացույցով նախատեսված վճարումները (աջակցության գումարի սահմանաչափին համապատասխան) չիրականացնելու դեպքում ժամկետանց պարտավորությունների համար տույժերը, տուգանքները վճարում է ծառայությունը.

12) ծառայությունը սույն որոշման N 1 հավելվածի 14-րդ կետով սահմանված փոխհատուցման վճարները (համապատասխան ծախսերը հիմնավորող փաստաթղթերում նշված գումարները) շահառուի անվամբ կազմակերպությունում բացված բանկային հաշվին է փոխանցում սույն կետի 7-8-րդ ենթակետերում նշված ժամանակացույցով սահմանված վճարումների առաջին վճարման օրը.

13) ծրագրի իրականացման ամբողջ գործընթացը (դիմումների ընդունում, տվյալների նույնականացում, հաստատում, մերժում, շահառուի կարգավիճակի տրամադրում, աջակցության վճարում) իրականացվում է համապատասխան ծրագրային ապահովման միջոցով՝ ինքնաշխատ եղանակով.

14) չիրացված հավաստագիրն ինքնաշխատ եղանակով ենթակա է փոփոխման ընտանիքում նոր երեխա ծնվելու կամ ընտանիքի որևէ անդամի մահվան դեպքում: Այս դեպքում ինքնաշխատ եղանակով հավաստագրում ավելացվում են նոր ծնված

երեխայի տվյալները կամ հեռացվում են ընտանիքի մահացած անդամի տվյալները և շահառուի կողմից նշված էլեկտրոնային հասցեին է ուղարկվում փոփոխված հավաստագիրը.

15) չիրացված հավաստագիրը համապատասխան ծրագրային ապահովության միջոցով ենթակա է չեղարկման հավաստագրից հրաժարվելու վերաբերյալ շահառուի դիմումի հիման վրա: Այս դեպքում ծառայությունը դիմումը ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում չեղարկում է հավաստագիրը, որն այդ պահից սկսած դառնում է անվավեր, և շահառուն կարող է սույն կարգով սահմանված ընթացակարգով ներկայացնել նոր դիմում.

16) չիրացված հավաստագիրն ինքնաշխատ եղանակով ենթակա է չեղարկման, եթե Պետական եկամուտների կոմիտեից ստացված տվյալների կրկնակի ստուգման արդյունքում պարզվում է, որ ծրագրի շրջանակում հավաստագրի տրամադրման համար հիմք հանդիսացած՝ եկամուտների հայտարարագրում ներկայացված տեղեկատվությունը ճշգրտվել է, ինչի արդյունքում սույն որոշման N 1 հավելվածի 9-րդ կետի 5-րդ ենթակետում նշված եկամուտների հանրագումարը գերազանցում է 10 մլն դրամը:

4. Բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերման հավաստագրի կամ անհատական բնակելի տան կառուցման հավաստագրի իրացման արդյունքում առաջացած դրական մնացորդն իրացվում է հետևյալ ընթացակարգով՝

1) եթե բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերման կամ անհատական բնակելի տան կառուցման (այդ թվում՝ հողամասի ձեռքբերման) նպատակով տրամադրված հիփոթեքային վարկի չափը փոքր է տվյալ ընտանիքին հասանելիք աջակցության չափից (հաշվարկվում է հավաստագրում ներառված ընտանիքի անչափահաս անդամների թվի հիման վրա), ապա այս դեպքում կազմակերպության կողմից հիփոթեքային վարկի գծով վճարման ժամանակացույցը և վճարումն իրականացնելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ համապատասխան ծրագրային ապահովման միջոցով ծառայությանը տրամադրելուց հետո ինքնաշխատ եղանակով դիմողի կողմից առցանց դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվում է էլեկտրոնային ծանուցում, որում նշված է դրական մնացորդի չափը.

2) էլեկտրոնային ծանուցումը ստանալուց հետո շահառուն դիմում է կազմակերպություն, եթե դրական մնացորդը ցանկանում է իրացնել սույն որոշման N 1 հավելվածի 15-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ուղղությամբ, որից հետո շահառուի հետ վերանորոգման վարկի տրամադրման վարկային պայմանագիր կնքելուց և վարկը փաստացի հատկացնելուց հետո կազմակերպությունը ծառայությանն է տրամադրում վարկի գծով վճարման ժամանակացույցը և վճարումն իրականացնելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ.

3) եթե շահառուն դրական մնացորդը ցանկանում է իրացնել կահույքի կամ կենցաղային տեխնիկայի գնման ուղղությամբ, ապա այս դեպքում աջակցության գումարը ծառայության կողմից փոխանցվում է վաճառողի բանկային հաշվին՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված փաստաթղթերի և շահառուի դիմումի հիման վրա՝ այն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում՝ շահառուն դրական մնացորդը կարող է իրացնել բացառապես նախապես սահմանված ապրանքատեսակների գնման համար:

5. Հիփոթեքային վարկի գործողության ընթացքում շահառուի մահվան դեպքում դրամական աջակցության վճարումը դադարում է ամբողջությամբ, եթե շահառուի ժառանգը կամ ժառանգներից առնվազն մեկը չի հանդիսանում ընտանիքի անդամ (շահառու, գրանցված ամուսնության դեպքում՝ նաև ամուսին, նրանց երեխաներ և զավակներ), ընդ որում՝ այդ պահի դրությամբ վճարված պետական աջակցության գումարները ենթակա չեն վերադարձման պետությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

05.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ